ռավարութեան օրինաց կարգին մէջ կրնայ հանդիպիլ. ասանկ կրնայ եղած ըլլալ Հոմերոսի քերթուածոց վրայ ալ, որ այլ և այլ հեղինակներու հանճարներէ մէյմէկ կատարեալ դիւցազներգութիւն ձևացած ըլլան: — Բոլորովին չհաւանեցանք մենք Վոլֆի ենթադրութեան ալ, որովհետև ինչպէս Շօէլ գերմանացին, այսպէս մենք ալ շատ կը քաշուինք այն սկեպտիկեան փիլիսոփայութենէն, որ այսօրուան օրս ամենայն գիտութեանց մէջ կ'ուզէ մտնել, ու գրականական աւանդութիւնները կը ջանայ փճացընել, ինչպէս որ հաւատքը վերուց ու ներկայ դարերուս երջանկութիւնը խռովեց: Սակայն այս պատճառէս զատ՝ պզտիկ առարկութիւն մը կ'ընենք մենք Վոլֆի դէմ. Ինչպէս կ'ըլլայ որ Իլիական ու Ոդիսական դիւցազներգութիւնները յետ այսչափ փոփոխութիւններ ու պէսպէս նորոգութիւններ կրելու և այլ և այլ բանաստեղծներու կամ թէ ըսենք այլ և այլ մատենագրաց երկասիրութիւն ըլլալու, որոնց անուններն ու անձինքն ալ յայտնի կը ցուցուին յոմանց, հնագոյն ժամանակներէ 'ի վեր մինչև հիմա ասոնց վրայ միշտ Հոմերոսի անունը մնացած ըլլայ, ինչպէս որ Վոլֆին ու իրեն կարծիքն ունեցողներուն Հոմերոսի դէմ խօսելէն ալ կ'իմացուի: Բայց կրնայ հետևցընել մէկը թէ կարելի է ուրեմն որ Հոմերոսի ժամանակը լուսաւորութեան դար մը եղած ըլլայ, և Հոմերոս իր Իլիական ու Ոդիսական դիւցազներգութիւնները անոնց ամենայն ամբողջութեամբը գրի վրայ առած ըլլայ:

Հոմերոսի վրայ եղած խնդիրները այնչափ խորին մթութեան մէջ են ու այնչափ տարակոյս կրնան ծնանիլ տալ, որ ըստ մեր կարծեացը՝ այս վէճերը ոչ երբէք պիտի լմննան գիտնոց մէջ, և միշտ զօրաւոր ու բազմաթիւ փաստերով հակառակ ճշմարտութիւններ պիտի հաստատուին: Բայց այժմ ընդհանուր խօսելով՝ Գերմանիա Վոլֆի կարծիքը կը բռնէ, իսկ Անգղիա, Հոլանտա, Գաղղիա ու Իտալիա Հոմերոսի պաշտպան ու ջատագով են: Ժամանակը թերևս օր մը այս նիւթոյն վրայ աւելի պայծառ լոյս մը սփռէ:

ԾԱՂԿԱՔԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Յայտնի է բանասիրաց որ եւրոպական մատենագրութիւնը այս յետին դարերուս այն աստիճանի ծաղկած ու պայծառացած է, որ Յունաց ու Լատինացւոց մատենագրութեանը հետ կրնայ արժանապէս բաղդատուիլ, և թէպէտ քանի մը մասի մէջ անոնց հաւասար չկրնար սեպուիլ, բայց ուրիշ կողմանէ ալ կը գերազանցէ զանոնք: Նոր դարերու եւրոպացի գրականաց երկասիրութիւններուն մէջ կը փայլի մտածութեան նոր կերպ մը, ճոխութիւն ու ազնուութիւն բացատրութեանց, նկարագրական փայլուն ոճ մը, բարոյական ու փիլիսոփայական վախճան մը, գաղափարական գեղեցկութիւն մը իմաստներու մէջ, բնութեան սէր, և ուրիշ ընտիր յատկութիւններ: Այսպիսի կատարելութիւններ ունենալէն ետքը մատենագրութիւն մը՝ կարծենք թէ պէտք է որ արևելեան հանճար ու գրականութիւն ունեցող ժողովրդեան մըն ալ, ինչպէս է մեր ազգը, սիրելի ըլլայ ու հաճոյական. անոր համար մենք ալ պատշաճ կը սեպենք որ ինչպէս ինչուան հիմա եւրոպացի բանաստեղծներու գեղեցիկ հատուածներ երբեմն երբեմն օրագրիս մէջ կը դնէինք, ասանկ ասկէց ետքը անոնց արձակաբան մատենագիրներուն ալ ճաշակը տանք մեր ազգայնոց:

Սրբազան Պերճախօս:

Ի բեմէ անտի, զոր քրիստոսական ամբառնայր կրօն, վեհագոյն ճշմարտութիւնք մեծաբարբառ հնչէին ընդ ծագս տիեզերաց, և սրբագոյն հրահանգք բարոյից դիւրընդելս ընծայէին անկիրթ խուժանին. բեմ ահաւոր, որոյ առաջի 'ի հեզութիւն փոխէին ոգք արեամբ ժողովրդեան շաղախեցան կայսերք. բեմ խաղաղարար և խնամակալու, որ անագորոյն ոսոխացն բազում անգամ ապաւէնս մատոյց. բեմ, որ պաշտպան ե-

կաց ընդ երկար գատից ամենայն ուրեք լքելոյ , և ինքն միայն 'ի մէջ անցեալ՝ զիրաւունս աղքատին ընդդէմ մեծատան ցուցանէր , տկարին ընդդէմ հարըստահարողին , և մարդոյն ընդդէմ անձին իսկ իւրոյ :

Ընդ՝ ամենայն ինչ ազնուական ընծայի և աստուածային . քարոզչին միրեալ իմն ոգւոց՝ մերթ ամբառնայ և մերթ հարկանէ զնոսա , մարթ է նմա գերագոյն ինչ քան զփառս գնել նոցա առաջի , և ահաւոր քան զմահ , և 'ի վերուստ երկնից յոյս իմն յաւիտենից 'ի գերեզմանս անդր իջուցանել , ուր ստրջանս ևեթ և արտասուս բերէր Պերիկլէս : Եթէ ըստ օրինակի Տուլլեայ ճարտարախօսին՝ զլեգէոն նահատակացն Մարսի մեծահռչակս դրուատիցէ , անմահութիւն հոգւոց նոցա շնորհէ , զոր յիշատակի նոցա միայն իշխէր խոստանալ Կիկերոն . և զհայրենեաց երախտագիտութեան պարտիս՝ Աստուծոյ թողու հատուցանել : Եթէ քարոզող լինել Աւետարանին կամիցի , հարկ 'ի վերայ կայ նմա առձեռն ունել զուսումն գիտութեան բարուց , զփորձ հմտութեան ընդ մարդն և ընդ գաղտնիս կրից նորա , և յիմաստասէրս անդ և 'ի հռետորսն նախնեաց քննութիւն մշտնջենաւոր : Նմին է անկ առաւել քան զվաղեմի ճարտարախօսս 'ի վերայ հասանել ճանապարհի սրտի մարդոյ , զյուզմունս զամենայն գիտել և զզգացմունս հոգւոյ ճանաչել բովանդակ . ոչ զի վառեալ գրգռիցէ զբուռն կիրս զժողովրդեանն և կամ զզայրոյթ նորա , ոչ զախտից արծարծել հրդեհ ահաւոր , և ոչ զհուր վրէժխնդրութեան և զքինու՝ յորում նախնին այն յաղթանակէր պերճախօսութիւն , այլ զի ցածուցանիցէ զնոսին և ամոքեալ սրբիցէ զոգիս : Որից ամենայնի ելեալ ախոյեան՝ առանց 'ի նպաստ ինչ իւր արքանեկելոյ զնոսա ձեռնամուխ լինի զայլ իմն ստեղծագործել կիրս , եթէ արժան իցէ այդու զխորին զայն և զվսեմ անուանել զզգացմունս , որ ամենայնի յաղթէ և զամենայնի 'ի սիրտս ունի զտեղի . խանդ իմն կրօնական , որոյ է 'ի բարբառ նորա , 'ի խորհուրդս և 'ի բանս մարգարէական իմն ազդել ոգի , քան եթէ զկիրս ատենախօսի :

ՎԻԼԸՄԷՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԷՊՔ

Հիմակուան Արեւելեան պատերազմը : (Տես երես 11)

1854

ՓԵՏՐՈՒԱՐ

25 . Մեծին Բրիտանիոյ Պեռլինի դեսպանը լորտ Պլումֆիլտ սանկ կը գրէ առ Գլարէնտըն կոմսը . Բրուսիոյ պաշտօնէից խորհրդոյն նախագահ Մանդայֆֆէլ պարոնը ինծի ըսաւ որ ինքը անանկ կը կարծէ թէ Թագաւորը մասնակից կ'ըլլայ Իշխանութիւնները պարպելու համար ռուս կառավարութեան առաջարկուելու պատուէրին . բայց այս ալ աւելցուց որ չէր կարծեր թէ Ռուսատանի կողմէն մերժում մը որ ըլլայ , Թագաւորը թշնամութեանց մէջ գործունեայ կերպ մը բռնէ . (Տես 27) :

Մեծին Բրիտանիոյ Կոստանդնուպոլսոյ դեսպանը այս պաշտօնագիրը կը խաւրէ Գլարէնտըն կոմսին . Այն հրովարտակն որ Օսմանեան կայսերութեան բոլոր ընդարձակութեանը մէջ ատենից առջև վկայութիւն ընելու իրաւունք ունենալուն կողմանէ զքրիստոնեայս Տաճկաց հետ նոյն կարգը կը դնէ , Սուլթանէն հաստատութիւն առաւ . (Տես 15) :

27 . Գլարէնտըն լորտը պատասխան կու տայ Պլումֆիլտ լորտին . Այն անընդունելի պայմանները , որոնցմով միայն Ռուսաց կայսրը կը հաւանի խաղաղութեան վրայ դաշնադրական խօսակցութիւն ընելու , ինչպէս նաև ռուս զէնքերուն թէ ցամաքի և թէ ծովու վրայ ունեցած տարածութիւնը , ալ տարակուսանաց ամենևին տեղիք չեն թողուր իր չարանիւթ քաղաքավարութեանը վրայ : Վերջին խօսք . Գաղղիա ու Անգղիա մի և նոյն ժամանակին մէջ պատուէր կու տան Ռուսաստանի Դանուբեան իշխանութիւնները պարպելու՝ սրա-